600.0489.15.11.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

15 նոյեմբերի 2017 թվականի №489Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2018-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Համաձայնություն տալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018-2027 թվականների ներդրումային ծրագրին՝ համաձայն №№1-5 հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018-2027 թվականների ներդրումային ծրագիրը կազմում է 248 164,9 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի, որից 6 216,1 մլն դրամը՝ 2018 թվականին՝ հետևյալ հիմնական ուղղություններով.
      ա. հոսանքազրկումների միջին տևողության և հաճախականության ցուցանիշների պահպանում, անվտանգության ապահովում և մաշված սարքավորումների փոխարինում. 2018-2027 թվականների ընթացքում՝ 146 046,7 մլն դրամ, որից 2018 թվականին՝ 5 243,8 մլն դրամ.
      բ. թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության կրճատում. 2018-2027 թվականների ընթացքում՝ 24 349,1 մլն դրամ, որից 2018 թվականին՝ 240,0 մլն դրամ.

գ. նոր սպառողների միացում և բաշխիչ ցանցի զարգացման նպատակային ծրագրերի իրականացում. 2018-2027 թվականների ընթացքում՝ 24 500,0 մլն դրամ, որից 2018 թվականին ներդրումներ նախատեսված չեն.

դ. առևտրային հաշվառման համակարգի բարելավում. 2018-2027 թվականների ընթացքում՝ 46 758,1 մլն դրամ, որից 2018 թվականին ներդրումներ նախատեսված չեն.

ե. բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ. 2017-2028 թվականների ընթացքում՝ 6 511,0 մլն դրամ, որից 2018 թվականին՝ 732,3 մլն դրամ:

2) սույն որոշման №5 հավելվածով յուրաքանչյուր ծրագրային տարում նախատեսված ներդրումների փաստացի իրականացված և հիմնավորված ծավալները սակագնային մարժայի շահույթի և մաշվածության հաշվարկման բազաներում կներառվեն սույն որոշման №1 հավելվածի 6-րդ կետով նույն ծրագրային տարում նախատեսված աշխատանքներն ամբողջական իրականացնելուց և շահագործման հանձնելուց հետո.

3) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2021 թվականին կսահմանի բաժանորդների հոսանքազրկումների միջին տևողության և հաճախականության բազիսային ցուցանիշներ: Սույն ենթակետում նշված ցուցանիշների 2025 թվականի ծրագրային մեծությունները սահմանվում են 2021 թվականի բազիսային ցուցանիշի 75%-ը, իսկ 2028 թվականի ծրագրային մեծությունները 2021 թվականի բազիսային ցուցանիշի՝ 55%-ը.

4) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2021 թվականին կսահմանի թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության բազիսային ցուցանիշներ: Սույն ենթակետում նշված ցուցանիշների 2025 թվականի ծրագրային մեծությունները սահմանվում են 2021 թվականի բազիսային ցուցանիշի 50%-ը: 2028 թվականին թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման ԳՕՍՏ 32144-2013-ով սահմանված երկարաժամկետ դեպքերը կբացառվեն.

5) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ

հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով սահմանված էլեկտրամատակարարման արտապլանային ընդհատման պահից վերականգնման առավելագույն տևողությունը (բացառությամբ այն սպառողների, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից) 2025 թվականին՝ քաղաքային համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում կսահմանվի 3 ժամ, 2028-ին՝ 2 ժամ, իսկ գյուղական համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում՝ 2025 թվականին՝ 6 ժամ, 2028 թվականին՝ 4 ժամ.

6) Սույն որոշման 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված ծրագրային ցուցանիշները չապահովելու դեպքում որոշման 1-ին կետի 1-ին ենթակերտի «ա» ենթակետով (բացառությամբ №1 հավելվածի 6-րդ կետի) և «բ» ենթակետով նախատեսված համապատասխան ներդրումները կնվազեցվեն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության սակագնային մարժայում ներառվող շահույթի և մաշվածության հաշվարկման բազաներից.

7) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018-2027 թվականների ներդրումային ծրագրի յուրաքանչյուր տարվա ընթացքում փաստացի իրականացված ներդրումների №№1-5 հավելվածների որևէ ուղղությամբ համաձայնեցված ծավալներից առավելագույնը 20% շեղումները, որոնց արդյունքում այդ ուղղության 2018-2027 թվականների ընթացքում իրականացվելիք ներդրումների ընդհանուր ծավալը չի փոփոխվի, կդիտարկվեն համաձայնեցված ներդրումների ծավալներում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
15 նոյեմբերի 2017 թ.
ժամը 16[00]